# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«13» հուլիսի 2012 թվականի N 28-Ն**

ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 4-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ֆոնդային բյուջեի բնակարանային շինարարություն (06.1.1) գործառական դասակարգման, շենքերի և շինությունների հիմնական նորոգում (5113) հոդվածը պակասեցնել 6300.0 հազ.դրամով, այն ուղղելով՝
   ա) Ճանապարհային տրանսպորտ (04.5.1) գործառական դասակարգման, շենքերի և շինությունների հիմնական նորոգում (5113) հոդվածին – 5800.0 հազ.դրամ
   բ) նախագծա-նախահաշվային աշխատանքներ (5134) հոդվածին - 500.0 հազ.դրամ:
2. Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 2788.2 հազ.դրամով, այն ուղղելով՝
   ա) Ճանապարհային տրանսպորտ (4.5.1) գործառական դասակարգման, շենքերի և շինությունների հիմնական նորոգում (5113) հոդվածին - 968.2 հազ.դրամ
   բ) ջրամատակարարում (06.3.1) գործառական դասակարգման, շենքերի և շինությունների կառուցում (5112) հոդվածին - 1700.0 հազ.դրամ, նախագծա-նախահաշվային աշխատանքներ (5134) հոդվածին – 120.0 հազ.դրամ:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | [signature] | | |
| ԼԵՎՈՆ ԱՋԱՏԽԱՆՅԱՆ | [signature] | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | [signature] | | |
| ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | [signature] | | |
| ՏԻԳՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ | [signature] | | |
| ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ | [signature] | | |
| ՆՈՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | | | |
| ՎԻԳԵՆ ՌՍԿԱՆՅԱՆ | | | |
| ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՆԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«13» հուլիսի 2012 թվականի N 29-Ն**

ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Մասիսի քաղաքային համայնքի 2012թ. առաջին կիսամյակի բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 79.8%-ով: Նախատեսված 227132.0 հազ.դամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 181350.0 հազ.դրամ:

2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի մուտքերը պակասել են 17465.0 հազ.դրամով, կամ 8.8%-ով:

Վարչական բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 85.9%-ով: Նախատեսված 178990.0 հազ.դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 153734.0 հազ.դրամ: Թերակատարումը կազմել է 25256.0 հազ.դրամ: Հարկային եկամուտները կատարվել են 56.4%-ով, տեղական տուրքերը՝ 75.6%-ով, ոչ հարկային եկամուտները՝ 70.7%-ով:

Վարաչական բյուջեն առանց պատվիրակած լիազորությունների և դոտացիայի կատարվել է 61.3%-ով: Նախատեսված 62646,0 հազ.դրամի դիամց, փաստացի մուտքերը կազմել են 38413,0 հազ.դրամ: 2011թ. համեմատ այն նվազել է 3819,0 հազ.դրամով:

Ֆոնդային բյուջեի մուտքերի առաջադրանքը կատարվել է 57,4%-ով: Նախատեսված 48142,0 հազ.դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 27617,0 հազ.դրամ, այն 2011թ. համեմատ նվազել է 18610,0 հազ.դրամով:

Բյուջեի ծախսային մասը կատարվել է 71.7 %-ով: Նախատեսված 226626.0 հազ.դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 161268.0 հազ.դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 82.2 %-ով, 178735.0 հազ.դրամի դիամց փաստացի ծախսը կազմել է 147005.0 հազ.դրամ:

Ֆոնդային բյուջեի ծախսերը կազմել են 14263.0 հազ.դրամ, այն կատարվել է 29.8 %-ով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածի 1-ին պարբերության և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Մասիսի քաղաքային համայնքի 2012թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | [signature] | | |
| ԼԵՎՈՆ ԱԶԱՏԽԱՆՅԱՆ | [signature] | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀԱՄԼԵՏ | ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | | |
| ՏԻԳՐԱՆ | ՂԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | | | |
| ՎԻԳԵՆ | ՌՍԿԱՆՅԱՆ | | | |
| ԿԱՐԵՆ | ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴՄԻՏՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«13» հուլիսի 2012 թվականի N 30-Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N | Ինդեքսը գծագրի վրա | Առկա նպատակային նշանակությունը | Տարածքի մակերեսը | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը | Տարածքի մակերեսը (հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Առաջնահերթ (մինչև 5 տարի) | | | | | |
| 1 | 5.88 հա գյուղատնտեսական հողեր, որից՝ | | | բնակավայրի | |
| | Գ-1 | արոտ | 0.2 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.2 հա |
| | Գ-2 | արոտ | 0.15 հա | խառը կառուցապատման | 0.15 հա |
| | Գ-3 | արոտ | 0.44 հա | խառը կառուցապատման | 0.44 հա |
| | Գ-4 | արոտ | 0.01 հա | խառը կառուցապատման | 0.01 հա |
| | Գ-5 | արոտ | 0.1 հա | խառը կառուցապատման | 0.1 հա |
| | Գ-6 | արոտ | 0.01 հա | խառը կառուցապատման | 0.01 հա |
| | Գ-7 | վարելահող | 1.2 հա | տնամերձ | 1.2 հա |
| | Գ-8 | վարելահող | 0.2 հա | խառը կառուցապատման | 0.2 հա |
| | Գ-9 | վարելահող | 0.57 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.57 հա |
| | Գ-10 | վարելահող | 0.7 հա | հասարակական | 0.7 հա |
| | Գ-11 | վարելահող | 1.3 հա | տնամերձ | 1.3 հա |
| | Գ-12 | վարելահող | 0.4 հա | խառը կառուցապատման | 0.4 հա |
| | Գ-13 | արոտ | 0.6 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 0.6 հա |
| *ընդամենը* | | | | | 5.88 հա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Միջնաժամկետ (5-10 տարի) | | | | | |
| 2 | 7.36 հա գյուղատնտեսական հողեր, որից ՝ | | | բնակավայրի | |
| | Գ-1 | վարելահող | 0.25 հա | խառը կառուցապատման | 0.25 հա |
| | Գ-2 | վարելահող | 0.21 հա | խառը կառուցապատման | 0.21 հա |
| | Գ-3 | վարելահող | 0.45 հա | տնամերձ | 0.45 հա |
| | Գ-4 | վարելահող | 0.56 հա | հասարակական | 0.56 հա |
| | Գ-5 | վարելահող | 0.45 հա | հասարակական | 0.45 հա |
| | Գ-6 | վարելահող | 0.28 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.28 հա |
| | Գ-7 | վարելահող | 0.28 հա | հասարակական | 0.28 հա |
| | Գ-8 | վարելահող | 0.28 հա | հասարակական | 0.28 հա |
| | Գ-9 | այլ հողատեսքեր | 0.3 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 0.3 հա |
| | Գ-10 | վարելահող | 0.35 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.35 հա |
| | Գ-11 | վարելահող | 0.55 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.55 հա |
| | Գ-12 | վարելահող | 1.3 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 1.3 հա |
| | Գ-13 | վարելահող | 0.5 հա | տնամերձ | 0.5 հա |
| | Գ-14 | վարելահող | 0.3 հա | խառը կառուցապատման | 0.3 հա |
| | Գ-15 | այլ հողատեսքեր | 0.03 հա | խառը կառուցապատման | 0.03 հա |
| | Գ-16 | վարելահող | 0.49 հա | տնամերձ | 0.49 հա |
| | Գ-17 | վարելահող | 0.16 հա | խառը կառուցապատման | 0.16 հա |
| | Գ-18 | այլ հողատեսքեր | 0.12 հա | խառը կառուցապատման | 0.12 հա |
| | Գ-19 | այլ հողատեսքեր | 0.03 հա | տնամերձ | 0.03 հա |
| | Գ-20 | վարելահող | 0.47 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 0.47 հա |
| *ընդամենը* | | | | | 7.36 հա |
| 3 | 1.5 հա գյուղատնտեսական հողեր, որից ՝ | | | էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | |
| | Գ-21 | վարելահող | 1.5 հա | կոմունալ ենթակառուցվածքներ | 1.5 հա |
| *ընդամենը* | | | | | 1.5 հա |
| 4 | 6.04 հա գյուղատնտեսական հողեր, որից ՝ | | | հատուկ պահպանվող տարածքների հողեր | |
| | Գ-22 | վարելահող | 2.9 հա | պատմական և մշակութային | 2.9հա |
| | Գ-23 | վարելահող | 3.14 հա | պատմական և մշակութային | 3.14 հա |
| *ընդամենը* | | | | | 6.04 հա |
| Հեռանկարային (10-15 տարի) | | | | | |
| 5 | 18.26 հա գյուղատնտեսական հողեր, որից ՝ | | | բնակավայրի | |
| | Գ-1 | վարելահող | 0.14 հա | խառը կառուցապատման | 0.14 հա |
| | Գ-2 | վարելահող | 0.21 հա | խառը կառուցապատման | 0.21 հա |
| | Գ-3 | վարելահող | 0.57 հա | տնամերձ | 0.57 հա |
| | Գ-4 | վարելահող | 0.73 հա | տնամերձ | 0.73 հա |
| | Գ-5 | վարելահող | 0.13 հա | խառը կառուցապատման | 0.13 հա |
| | Գ-6 | այլ հողատեսքեր | 0.03 հա | խառը կառուցապատման | 0.03 հա |
| | Գ-7 | վարելահող | 0.11հա | խառը կառուցապատման | 0.11հա |
| | Գ-8 | վարելահող | 0.22 հա | տնամերձ | 0.22 հա |
| | Գ-9 | այլ հողատեսքեր | 0.13 հա | տնամերձ | 0.13 հա |
| | Գ-10 | վարելահող | 0.57 հա | տնամերձ | 0.57 հա |
| | Գ-11 | վարելահող | 0.11 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.11 հա |
| | Գ-12 | վարելահող | 0.67 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 0.67 հա |
| | Գ-13 | վարելահող | 0.9 հա | տնամերձ | 0.9 հա |
| | Գ-14 | վարելահող | 0.96 հա | տնամերձ | 0.96 հա |
| | Գ-15 | վարելահող | 0.99 հա | խառը կառուցապատման | 0.99 հա |
| | Գ-16 | վարելահող | 1.07 հա | խառը կառուցապատման | 1.07 հա |
| | Գ-17 | վարելահող | 0.46 հա | հասարակական | 0.46 հա |
| | Գ-18 | վարելահող | 0.97 հա | տնամերձ | 0.97 հա |
| | Գ-19 | այլ հողատեսքեր | 0.28 հա | տնամերձ | 0.28 հա |
| | Գ-20 | վարելահող | 1.4 հա | տնամերձ | 1.4 հա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Գ-21 | վարելահող | 1.0 հա | տնամերձ | 1.0 հա |
| | Գ-22 | վարելահող | 1.0 հա | տնամերձ | 1.0 հա |
| | Գ-23 | վարելահող | 0.7 հա | տնամերձ | 0.7 հա |
| | Գ-24 | վարելահող | 0.7 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.7 հա |
| | Գ-25 | վարելահող | 0.4 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.4 հա |
| | Գ-26 | վարելահող | 0.4 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.4 հա |
| | Գ-27 | վարելահող | 0.06 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.06 հա |
| | Գ-28 | վարելահող | 0.06 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.06 հա |
| | Գ-29 | վարելահող | 0.09 հա | ընդհանուր օգտագործման (կանաչ) | 0.09 հա |
| | Գ-30 | այլ հողատեսքեր | 2.7 հա | ընդհանուր օգտա-գործման(փողոցներ) | 2.7 հա |
| | Գ-31 | վարելահող | 0.5 հա | հասարակական | 0.5 հա |
| Ընդամենը | | | | | 18.26 հա |
| 6 | 1.35 հա արդյունաբերության ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, որից ՝ | | | բնակավայրի | |
| | ԱԴ-I | արտադրական օբյեկտներ | 1.35 հա | տնամերձ | 1.35 հա |
| *ընդամենը* | | | | | 1.35 հա |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14[3] հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | | | |
| ԼԵՎՈՆ ԱԶԱՏԽԱՆՅԱՆ | | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | | | |
| ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | | |
| ՏԻԳՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | | | |
| ՎԻԳԵՆ ՌՍԿԱՆՅԱՆ | | | |
| ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴՄԻՏՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ